ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դավիթյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի, ֆիրմային անվանման, մոդելի մուտքագրման (լրացման) մասին.

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը:

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, ֆիրմային անվանումը, մոդելը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ),

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. օգոստոսի 15-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի** հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **օգոստոսի 14-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Անդրանիկ Աբգարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դավիդյան